ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. օգոստոսի 2-ին, թիվ 82-Ա
ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ Ն. ԲԱԶՄԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2011 թվականի հունիսի 30-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011թվականի մարտի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում 2011 թվականին հողաշինության և հողօգտագործման բնագավառում տեսչական ստուգումներ իրականացնելու մասին>> թիվ 35-Ա կարգադրությամբ հաստատված ժամանակացույցի համաձայն Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին - մարզային հողային պետական տեսչությունը իրականացրել է տեսչական ստուգումներ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ն. Բազմաբերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ, որի արդյունքում պարզվել է, որ համայնքում առկա 5.52 հա ընդերքի տարածքը ապօրինաբար (առանց նպատակային նշանակությունը պահպանելու) օգտագործվում է: Համայնքի ղեկավարին՝ բազմիցս անգամ զգուշացվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ համայնքում հողերի օգտագործումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրականացնելու համար, սակայն Ն. Բազմաբերդ համայնքի ղեկավար Աշոտ Հակոբյանը չի իրականացրել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունները, այսինքն՝ չի կանխարգելել, չի կասեցրել և չի վերացրել համայնքի վարչական սահմանում գտնվող 5.52 հա ընդերքի ապօրինի օգտագործումը, հողային օրենսդրության պահանջները խախտողի նկատմամբ չի կիրառել վարչական տույժ, ինչպես նաև իրավասու մարմիններին չի ներկայացրել հաղորդումներ իրավախախտում թույլ տված անձին՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Վարչական իրավախախտումների մասին>> օրենսգրքի 244.9, 54-րդ հոդվածի 3-րդ մասով և 281-283-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ն. Բազմաբերդ համայնքի ղեկավար Աշոտ Հակոբյանի նկատմամբ նշանակել տուգանք մեկ հարյուր հիսուն հազար դրամ, որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ քան 15 օրվա ընթացքում՝ հ/հ 900005242921:

2. Սույն որոշման պատճեն երեք օրվա ընթացքում հանձնել Ն. Բազմաբերդ համայնքի ղեկավար Աշոտ Հակոբյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ն. Բազմաբերդ համայնքի ղեկավար Աշոտ Հակոբյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով 10 օրվա ընթացքում:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ